

ՍԿԵՏԱՆԱ ԱԶԻԶՅԱՆ

ԵՂԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Անգլերենը աշխարհի շատ լեզուների նման հարուստ է տարբեր պրագմատիկ և դիսկուրս ֆունկցիաներով: Այդպիսին են մոդալականության արտահայտման միջոցները և նրանց մեջ բայի եղանակի քերականական կարգը, որը քերականավորում է մոդալականությունը (Hopper, Traugott-1993): Մոդալականությունը կարող է տարբեր լինել և կարող է արտահայտվել տարբեր դիսկուրսիվ միջոցներով¹: Բայի եղանակածները, եղանակավորող բառերը, եղանակավորող բայերը, դերբայներն ու դերբայական կառույցները, հնչերանգը, ոճը դիսկուրսիվ միջոցներ են, որոնք արտահայտում են իրականության և ասույթում արտահայտված գործողության հարաբերությունը, այսինքն՝ մոդալականություն, որն, անշուշտ, իր մակարդակով կարող է տարբեր լինել:

Դիսկուրսիվ կամ խոսության ընդունված է անվանել այն բառերն ու կարգերը, որոնք ապահովում են տեքստի կապակցվածությունը և խոսողի ու լսողի փոխազդեցությունը: Դիսկուրսիվ կարգերն են բայի կերպի, ժամանակի, մոդալականության, եղանակի քերականական կարգերը, այսինքն՝ ստորոգում արտահայտող կարգերը /Ե. Վ. Պաղուչևա/:

Սեզ հետաքրքրում է բայի եղանակի քերականական կարգը: Ընդունելով, որ բայի եղանակի քերականական կարգն արտահայտում է մոդալականություն, որն իրենից ներկայացնում է ասույթում արտահայտված գործողության և իրականության հարաբերությունը, տարբերակում ենք իրական և անիրական եղանակների խումբ²:

Իրական եղանակներն են՝ (real or direct moods) սահմանականը և հրամայականը, իսկ անիրական կամ թեք եղանակներն են՝ պայմանականը (Conditional), ենթադրականը (Suppositional), ըղծական I-ը (Subjunctive I) և ըղծական II-ը (Subjunctive II):

¹ Դիսկուրսիվ ընդունված է անվանել այն բառերն ու կատեգորիաները, որոնք ապահովում են տեքստի կապվածությունը և խոսողի ու լսողի:

² Ազիզյան Ս Ա. Մոդալականության արտահայտման միջոցներն անգլերենում:

Ոչ բոլոր լեզվաբաններն են ընդունում եղանակի քերականական կարգը և ոչ բոլոր լեզուներում է, որ այն ընդունվում է: Բայց իրականության և ասույթում արտահայտված գործողության հարաբերությունը գոյություն ունի բոլոր լեզուներում, այդ թվում և անգլերենում, և եղանակի քերականական կարգն այն միջոցներից է, որ իրականացնում է նման հարաբերությունները:

Սահմանական եղանակը համարվում է այն եղանակածևը, որն արտահայտում է իրականում անցյալում կատարված, ներկայում կատարվող և ապագայում կատարվելիք գործողություն՝ այսինքն այս եղանակն ունի օբյեկտիվ եղանակային իմաստ, ունի ժամանակային ոռոշակիություն՝ զուգադրվող անգլերեն և հայերեն լեզուներում: Սահմանական եղանակով արտահայտված բայածևը արտահայտվում է և՛ ժամանակի, և՛ կերպի, և՛ սեռի, և՛ ժամանակային հարաբերակցության, և՛ դեմքի, և՛ թվի, քերականական կարգերով: Սրանք բոլորն էլ արտահայտվում են բայ-ստորոգյալում:

Օրինակ՝ 1. I often meet Jane. Հաճախ եմ հանդիպում Ջեյնին:

2. She usually worked with foreign firms. Նա սովորաբար համագործակցում էր արտասահմանյան ֆիրմաների հետ:

3. We shall always discuss our plans with her. Մենք միշտ նրանց հետ կքննարկենք մեր ծրագրերը:

Նշված երեք նախադասություններում բայ-ստորոգյալներն արտահայտում են *դեմքի կարգ*՝ I դեմք – առաջին և երկրորդ նախադասություններում, և III դեմք – երկրորդ նախադասության մեջ:

Թվի կարգ - եզակի թիվ՝ առաջին և երկրորդ նախադասություններում, հոգնակի թիվ՝ երրորդ նախադասության մեջ:

Ժամանակի կարգ - ներկա, անցյալ և ապառնի համապատասխանաբար առաջին, երկրորդ և երրորդ նախադասություններում:

Սեռի կարգ - ակտիվ, ոչ կրավորական - առաջին, երկրորդ և երրորդ նախադասություններում:

Կերպի կարգ - ընդհանուր, ոչ շարունակական - առաջին, երկրորդ և երրորդ նախադասություններում:

Ժամանակային հաջորդականության կարգ՝ - ոչ պերֆեկտային ձևեր - առաջին, երկրորդ և երրորդ նախադասություններում:

Եղանակի կարգ՝ սահմանական եղանակ - առաջին, երկրորդ և երրորդ նախադասություններում:

Սահմանական եղանակի ժամանակածևերը ըստ ընդունված տեսակետի 12 կամ 16-ն են, որոնք իրենց հերթին կազմում են 4 խումբ՝ Indefinite, Continuous, Perfect և Perfect-Continuous և որոնցից յուրաքանչյուրում ժամանա-

կածները դասավորվում են ըստ ժամանակային կարգի 3 ընդհանուր ժամանակահատվածի, որոնք ընդունված է անվանել՝ ներկա, անցյալ, ապառնի: Բոլոր այս ժամանակածները պարզ բացարձակ ժամանակածներ են իմաստային առումով, քանի որ նրանք՝ 1. անկախ են գործածության առումով, կախվածություն չունեն այլ ժամանակածներից Future in the Past ժամանակածների նման և 2. արտահայտում են գործողության կատարման բացարձակ ժամանակ:

Ինչպես արդեն նշել ենք, վերը նշված բայի քերականական կարգերը, այդ թվում և եղանակի կարգը լեզվաբանները միանշանակ չեն ընդունել լեզվի զարգացման տարբեր ժամանակահատվածներում: Այսպես, օրինակ, հրամայական եղանակի գոյության վերաբերյալ նույնպես լեզվաբանները տարածայնություններ են ունեցել: Լեզվաբաններից ոմանք նույնացնում էին հրամայականը անորոշ դերբայի ձևերի հետ: Չպետք է մոռանալ, որ անորոշ դերբայը բայի անդեն, չխոնարհված ձև է, իսկ հրամայական եղանակը խոնարհված բայածնով է արտահայտվում, քանի որ ունի երկրորդ դեմքի *you* ենթական, որը պարզապես բաց է թողնվում, քանի որ անծնական դերանուններից ուրիշ ոչ մեկը չի կարող փոխարինել *you* դերանվանը հրամայական նախադասություններում: Այսօր հրամայական եղանակն ընդունելի է իր համապատասխան ժխտական և ոչ ժխտական ձևերով և արտահայտում է խոսողի հրամանը, խնդրանքը, որը և լսողին որոշակի գործողության է մղում:

Օրինակ՝ Tell everything. Պատմի՛ր ամեն ինչ:
Do not miss any details, կամ Don't miss any details.
Բաց մի թող ոչ մի մանրամասնություն /մանրուք/:

Հրամայական եղանակում էլ սահմանական եղանակի նման, կարող են գործել դեմքի, թվի, կերպի, սեռի քերականական կարգերը, բայց նրանք միշտ չէ, որ գործում են, քանի որ հրամանը, խնդրանքը վերաբերում են ընդհանրապես գալիքին: Եվ քանի որ հրամայական ձևերը կազմվում են անորոշ դերբայից, ուրեմն կարող են ընդունել անորոշ դերբայի բոլոր ձևերը՝ ակտիվ, պասիվ, ընդհանուր, շարունակական, բայց օրինակներն այս առումով շատ քիչ են, քանի որ հրամայում կամ խնդրում ես խոսակցիդ ընդհանուր առմամբ: Հրամայական եղանակը չունի ժամանակի կարգ և նախորդման ու միաժամանակության արտահայտման ձևեր:

Don't get annoying.
Don't get excited.
Don't be punished.

Անգլերեն և այլ լեզուներին հատկանշական է իրականության և անիրականության հակադրումը, որը և կազմում է եղանակի քերականական

կարգի հիմքը (O. Dahl): Անիրական կամ թեք եղանակներն, ինչպես արդեն նշել ենք, պայմանական, ենթադրական, ըղծական I-ը, ըղծական II-ն են: Թեք կամ անիրական եղանակները, ի տարբերություն իրական կամ ուղիղ եղանակների, չունեն ժամանակի քերականական կարգ, քանի որ վերջիններս ցույց են տալիս ժամանակ՝ բառիս բուն իմաստով, այսինքն ժամանակը ցույց է տալիս տրված իրավիճակի և ասույթի հարաբերություն, ժամանակային որոշակիություն, գործողության կատարման ժամանակը՝ ներկա, անցյալ և ապառնի, այսինքն գործողության կատարման բացարձակ ժամանակը, իսկ թեք եղանակները նման ժամանակային որոշակիության իմաստ չեն արտահայտում: Նրանք չեն արտահայտում գործողության կատարման բացարձակ ժամանակ և անկախ ժամանակ չեն և այդ առումով պարզ ժամանակաձևեր չեն կարող լինել, այլ միայն կախյալ, քանի որ օբյեկտիվ ժամանակն արտահայտվում է ոչ թե հենց թեք եղանակներով, այլ իրենց նախորդող գլխավոր նախադասության սահմանական եղանակով դրված բայ – ստորոգյալով, որի հետ էլ հարաբերության մեջ են մտնում թեք եղանակաձևերով արտահայտված բայ-ստորոգյալները: Թեք, անիրական եղանակները հարաբերության մեջ են մտնում բացարձակ ժամանակաձևերի հետ և նրանք արտահայտում են միայն նախորդում, հաջորդում, միաժամանակություն, և դա պայմանավորված է նրանով, որ թեք եղանակաձևերը կազմվում են անորոշ դերբայի օգնությամբ՝ արտահայտելով նրա հատկանշական կողմերը, իսկ դերբայը բայի անդեն, չխոնարված ձև է և ժամանակ չի արտահայտում, այլ միայն նախորդում (to have asked), միաժամանակ է ընթանում (want to speak) կամ հաջորդում է գլխավոր նախադասության ստորոգյալի արտահայտած գործողությանը (arrived to have a talk): Իսկ ինչ վերաբերում է մնացած քերականական կարգերին՝ ապա նրանք իրենց արտահայտությունն են գտնում թեք եղանակաձևերից միայն երեքի մեջ: Թեք եղանակաձևերը, մեծամասամբ, չունեն ինքնուրույն գործածություն և նրանք միշտ կախված են գլխավոր նախադասության բայ-ստորոգյալից ու հարաբերվում են նրա հետ և ելակետային են հանդիսանում թեք եղանակների համար, քանի որ նախորդումը, միաժամանակությունը և հաջորդումը կախված են հենց այդ ելակետից: Այսինքն՝ հարաբերության մեջ են մտնում հարաբերական և բացարձակ ժամանակաձևերը: Հարաբերական ժամանակաձևերը, taxis-ը /ո/. Ջակոբսոն/, ցույց է տալիս երկու տարբեր իրադրությունների հարաբերություն, որոնցից մեկը կարող է գործածվել կամ նույն նախադասության մեջ, կամ որպես ինքնուրույն նախադասություն, կամ էլ կարող է բաց թողնվել, չնշվել, բայց հասկացվել:

Օր.՝ I wish you learned a foreign language.

Երանի, թե որևէ օտար լեզու սովորեիր:

Եթե այս օրինակում *wish* բայով արտահայտում ենք ընդհանրապես ներկա ժամանակում կատարվող գործողություն, ապա *learned* բայաձևով արտահայտված գործողությունը չի արտահայտում որևէ ժամանակ, այլ ցույց է տալիս, որ *learned* բայով արտահայտված գործողությունը պարզապես միաժամանակ է ընթանում է ներկա ժամանակահատվածում *wish* բայով արտահայտված գործողության հետ:

Եթե վերցնենք *I wish you had learned a foreign language. Երանի թե սովորեիր /սովորած չիների որևէ օտար լեզու* նախադասությունը, ապա կտեսնենք, որ *wish* բայաձևով արտահայտված գործողությունը կատարվում է ներկա ժամանակում, իսկ *had learned-ը՝* թեք եղանակային ձև է, որի գործածությունը պայմանավորված է *wish* բայի սահմանական եղանակաձևով և ցույց է տալիս միայն նախորդում՝ իմ ցանկությունն է, որ դու արդեն սովորած չիների որևէ օտար լեզու, իրականացրած չիների մեկ այլ օտար լեզվի ուսուցումը:

Վերցնենք մեկ այլ օրինակ՝ *You will behave as if you hadn't witnessed the accident.*

Քեզ կպահես, կարծես ականատես չես եղել պատահարին, կարծես անտեղյակ ես, ոչինչ չես տեսել:

Hadn't witnessed բայաձևը արտահայտում է նախորդում հարաբերելով ապառնի ժամանակում կատարվող *will behave* բայաձևով արտահայտված գործողությանը, որն էլ հենց արտահայտում է ապառնի ժամանակ և դա էլ հենց ժամանակի քերականական կարգի բացարձակ արտահայտությունն է: Վերցնենք մի ուրիշ օրինակ՝ *You will behave as if you knew nothing.* Քեզ կպահես կարծես ոչինչ էլ չգիտես:

Knew բանաձևով արտահայտված գործողությունը միաժամանակյա է *will behave* գործողությանը, որն օգտագործվում է ապառնի ժամանակով, այսինքն՝ ապառնի ժամանակը գործողության կատարման բացարձակ ժամանակն է:

Այսպիսով, կարելի է ասել, որ ժամանակի քերականական կարգը գործում է միայն սահմանական եղանակով արտահայտված բայաձևում և չի գործում թեք եղանակներով արտահայտված ժամանակաձևերում: Թեք եղանակներում խոսքը գնում է այն նույն ժամանակի մասին, որն արտահայտում է սահմանական եղանակով նշված բայ-ստորոգյալը, քանի որ թեք եղանակների գործածությունն ինքնուրույն և անկախ չէ, այսինքն՝ խոսքը գնում ժամանակային հարաբերության կամ *axis*-ի մասին, այսինքն այն հարաբերության, որը ստեղծվում է բացարձակ իրադրության և մեկ այլ իրադրության միջև:

Բացարձակ իրադրություն արտահայտող իրավիճակը կարող է նշված լինել նույն կամ մեկ այլ նախադասության մեջ, կամ էլ կարող է ընդհանրապես չնշվել, բայց հասկացվել տեքստից կամ խոսույթից:

Վերը նշված բոլոր օրինակները ցույց են տալիս բացարձակ ժամանակի և *taxis*-ի հարաբերությունը:

Վերցնենք մեկ ուրիշ օրինակ՝ *Oh, if you won the prize. Եթե միայն շահեիր մրցանակը:* Այս օրինակում տեսնում ենք, որ *won* թեք եղանակով արտահայտված բայաձևը ներկայացնում է մեկ ընդհանուր ժամանակահատվածին վերաբերող մի գործողություն, որը կարող է մի ամբողջ հավիտենականության կամ մի ամբողջ կյանքի վերաբերել և կարող է իր մեջ ընդգրկել և՛ ներկա, և՛ անցյալ, և՛ ապառնի ժամանակահատվածները:

Ի մի բերելով ժամանակի քերականական կարգի հարցը թեք եղանակների առումով՝ կարելի է ասել, որ թեք եղանակները չունեն ժամանակի քերականական կարգ բառիս բուն իմաստով, չեն արտահայտում գործողության կատարման բացարձակ ժամանակ, քանի որ նրանք հիմնականում կախման մեջ են գտնվում սահմանական եղանակով արտահայտված բացարձակ ժամանակ արտահայտող բայաձևերից, և բացի այդ, միշտ ներկայացնում են խոսողի ցանկությունը կամ նրա երևակայությունը: Կամ էլ պետք է ընդունել, որ ժամանակի քերականական կարգն ունի հիմնական և երկրորդական իմաստներ, որոնցից հիմնական իմաստը գործողության կատարման ժամանակի արտահայտությունն է ներկա, անցյալ, ապառնի ժամանակներում, իսկ երկրորդ, և ոչ հիմնական գործածությունը, նախորդման, միաժամանակության և հաջորդման գաղափարի արտահայտումն է, որը բխում է թեք և իրական եղանակների հարաբերությունից: Թե մեկ, և թե մյուս դեպքերում, անիրական եղանակներն օգտագործվում են նախորդող, միաժամանակյա և հաջորդող գործողություն արտահայտելու համար և դա անում են ոչ թե ժամանակի, այլ ժամանակային հարաբերակցության քերականական կարգի օգնությամբ: Նախորդումը, միաժամանակությունը և հաջորդումը իրենցից ներկայացնում են տրամաբանական մի կատեգորիա կամ ինչպես լեզվաբանության մեջ ընդունված է անվանել, *taxis*-ի կատեգորիան /*taxis* լատինական բառով/, և արտահայտում են ներլեզվային հարաբերություններ: Նրանք չեն արտահայտում օբյեկտիվ իրականության ժամանակագրական հարաբերություններ: Նախորդումը, միաժամանակությունը և հաջորդումը, լինելով ներլեզվային կատեգորիաներ, պահպանում են գործողությունը հենց այն ժամանակում, որն արտահայտվում է բացարձակ ժամանակով: Սրանք միայն լեզվին հատուկ

լեզվական կատեգորիաներ են և չունեն իրենց համարժեքը օբյեկտիվ իրականության մեջ: Այս կատեգորիաները չեն կարող հանդես գալ որպես՝

1. անկախ ժամանակաձևեր,
2. միշտ պետք է հանդես գան պարզ բացարձակ ժամանակաձևի հետ նույն մակարդակում, քանի որ անընդունակ են օբյեկտիվ ժամանակ արտահայտելու: Այս առումով հավանաբար սխալ է ասել, որ թեք եղանակներն ունեն ներկա և անցյալ ժամանակ: Ավելի ճիշտ կլիներ ասել ունեն երկու ձև՝ մեկը նախորդում, մյուսը՝ միաժամանակություն և հաջորդում արտահայտելու համար: Ինչ վերաբերում է դեմքի, թվի, կերպի, սեռի, ժամանակային հարաբերակցության քերականական կարգերին, ապա թեք եղանակներում նրանք հեշտությամբ գտնում են իրենց արտահայտության ձևերը: Օրինակ՝ I should be having a smoke now.- /շարունակական կերպ/ Հիմա կօխե՞ի: Հիմա չէի՞ օխի: It is necessary that they (should) be given some information on the problem.- /կրավորական սեռ/: Անհրաժեշտ է, որ նրանց տեղեկություն տան տվյալ հարցի վերաբերյալ: But for you he wouldn't have bought this nice house.- /նախորդում/ Եթե դու չլինեիր, նա չէր գնի այս գեղեցիկ տունը:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ թեք եղանակներում, բացի ժամանակի կարգից, իրացվում են բայի բոլոր քերականական կարգերը, սեռի քերականական կարգը՝ (should) be given, ժամանակային հարաբերակցության կարգի՝ would have bought, դեմքի կարգի՝ I (I դեմք), he, they (III դեմք), թվի քերականական կարգի՝ I /եզակի թիվ/, they /հոգնակի թիվ/ հետ:

Վերը նշված նախադասություններում, ուր ունենք թեք եղանակների գործածության օրինակներ, ականատես ենք լինում կերպի՝ should be having a smoke, սեռի՝ (should) be given, ժամանակային հարաբերակցության՝ wouldn't have bought, դեմքի՝ I (I դեմք), թվի՝ I, he - եզակի թիվ, քերականական կարգերի առկայությանը:

Գրականություն

1. Бархударов Л. С. Русско-английские языковые параллели. Русский язык за рубежом. N4., М., 1973.
2. Смирницкий А. И. Морфология английского языка. М., 1959.
3. Падучева Е.В., Четвертая типологическая школа. Международная школа по лингвистической типологии. Ереван 2005.